



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«27» ցեկտեմբերի 2019թ.

№ 2/7594-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 2/1596-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանումներում աշխատանքային ռեժիմ սահմանելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 801-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2/1596-Ա հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) հրամանի 4.1-րդ կետում «դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 26-ը» բառերով,



2) հրամանի 4.1-րդ կետում «21:00-ն» բառերից հետո լրացնել «, 2019 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ սահմանել շուրջօրյա աշխատանքային ռեժիմ, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանել աշխատանքային օր՝ ժամը 00:00-ից մինչև 21:00-ն ներառյալ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Recoverable Signature

X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

